

Ք Ն Ո Ւ Ք Ի Ի Ն Ն Ո Ւ Մ Ա Բ Գ Ը

Կեցած եմ շուար ու դեռ չգիտեմ,
 ժամերն իմ պարտապես ես ո՞ր անցրեմ
 Ծոցը բնութեա՞ն՝ լուռ ու վեհանդորր,
 Քէ կողին մարդկանց՝ սրտում ու մոլոր :

Վեհ է Բրնութիւնն, հաղցր ու գերող,
 Քմայներ ունի սակայն խօլ, անսանձ,
 Անոր ծոցին մէջ կը հաղորդուիս
 Տիեզերքի մեծ խօրհուրդին անանց :

Մարդը անգուր է, սիրտը հեռուլ լի,
 Բայց նոյնքան է խեղճ, արգահատելի.
 Օրէնքին ներքեւ ռումբի, երկաթի,
 Մարդը անգուր է բայց կարօտ գուրի :

Մարդն ծարաւի է իր եղբոր արեան,
 Մարդն ալ ունի միտք հմայներ անխիղճ,
 Բայց կը մեծնայ ան սէրեր մեծ ու ջիւջ
 Երբ գան ու զսնեն իր սրտի համբան :

Կեցած եմ շուար ու դեռ չգիտեմ,
 ժամերն իմ դատարկ ես ո՞ր անցրեմ,
 Ծոցը բնութեա՞ն թէ կողին մարդկանց,
 Երկուքն ալ կամօտ, երկուքն ալ անսանձ :

Գ. ՃԱՐՏԱՐ

